ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/9400-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-762-15.01.2024,22.02.2024-ԱռՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

Իրավական որոշակիություն ապահովելու նպատակով առաջարկում ենք Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նախատեսել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքին կատարվող հղումներ՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերությունում «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով սահմանված բժշկական միջամտության համար համաձայնություն տալու կարգավորումների համաձայն» բառերը.

2) 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ պարբերությունից հանել «միայն բացառիկ դեպքերում,» և «, իսկ սույն օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է» բառերը:»

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ